Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 15/16 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի B2 ինսպեկցիայի շրջանակներում շրջանառու ջրի համակարգից շլամի, մագնեզիումային և կալցիումային նստվածքների մաքրման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 6 հունիսի 2016թ. ժ. 10:00

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Է. Սանամյանը | - | Գլխավոր տնօրենի տեղակալ(նախագահ) |
| Վ. Խաչատրյանը | - | ՀՇԳՑԷ-ի ԿՏՍ-ի պետի տեղակալ |
| Ա. Չոբանյանը | - | Գլխավոր հաշվապահի տեղակալ |
| Ա. Պետրոսյանը | - | ՊԲ-ի առաջատար մասնագետ (քարտուղար) |

Նիստի օրակարգը

1. ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 15/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակցի գրաված տեղի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փաստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի B2 ինսպեկցիայի շրջանակներում շրջանառու ջրի համակարգից շլամի, մագնեզիումային և կալցիումային՝ նստվածքների մաքրման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1.ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 15/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝

- «Արփա Սևան» ԲԲԸ – (հասցեն՝ ք. Երևան, ք. Մեծամոր),

1.2. «Արփա Սևան» ԲԲԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. « Արփա Սևան » ԲԲԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, Տուժանքի մասին համաձայնությունը և վճարման պահանջագիրը, լիցենզիաների պատճենները:

1.4. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար « Արփա Սևան» ԲԲԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 12 111 152 (տասներկու միլիոն մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտերի և մասնակիցների գրաված տեղերի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել « Արփա Սևան» ԲԲԸ-ն:

2.2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի `ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ գրաված մասնակիցին՝ «Արփա Սևան» ԲԲԸ-ին, ՀՀ կառավարության 2015 թ-ի հունվարի 30-ի թիվ 105-ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը, կցելով նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերի պատճենները, տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրությունների և այլն) պատճենները, կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Հարց 3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի B2 ինսպեկցիայի շրջանակներում շրջանառու ջրի համակարգից շլամի, մագնեզիումային և կալցիումային նստվածքների մաքրման աշխատանքների

ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

Սույն արձանագրության 2-րդ կետով պահանջվող փաստաթղը մասնակցից և ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցումն ստանալու օրվան հաջորդող օրը հանձնաժողովի անդամներին տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ:

Հանձնաժողի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Է. Սանամյան

Անդամներ՝ Ա. Չոբանյան

Վ. Խաչատրյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան